ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունիսի 2023 թվականի N 955-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 206-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը և 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԱՐՄՖԻԼՏՐ» հայ-գերմանական համատեղ ձեռնարկություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 206-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ կետի «ԱՏԳ ԱԱ-Ի ԾԱԾԿԱԳԻՐԸ» սյունակի «8207801900» թիվը փոխարինել «8207703700» թվով.

2) 8-րդ կետի «ԱՏԳ ԱԱ-Ի ԾԱԾԿԱԳԻՐԸ» սյունակի «7326909801» թիվը փոխարինել «8421990007» թվով.

3) 13-րդ կետի «ԱՏԳ ԱԱ-Ի ԾԱԾԿԱԳԻՐԸ» սյունակի «7210490009» թիվը փոխարինել «7314500000» թվով.

4) 14-րդ կետի «ԱՏԳ ԱԱ-Ի ԾԱԾԿԱԳԻՐԸ» սյունակի «7210490009» թիվը փոխարինել «7314500000» թվով.

5) 14-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակի «պատրաստված տաք ցինկապատ նյութից 0.75 x 1000 x 2000 մմ» բառերը փոխարինել «Լայն=1000 մմ» բառերով.

6) 14-րդ կետի «Անվանումը» սյունակի «Պերֆորացված թիթեղ» բառերը փոխարինել «Ընդլայնված մետաղական թիթեղներ» բառերով.

7) 15-րդ կետի «Քանակը» սյունակի «1920» թիվը փոխարինել «2740» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ